

ռօտակի տտեճաբանեցին Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոսն Բարամեանց եւ Սերովբէ Եպիսկոպոսն Արարատեանց, որոց հետեւումէին ներսից՝ Ժառանգաւորաց դպրոցի աշակերտաց քաղցր ազգային երգերը եւ դրսից՝ հայ կորիճներէ հրացանաձգութեանց դղրդիւնները: Ի հարկէ ձեմարանը եւս իւր կողմից արժանապէս կոտնէր իւր Վեհ. Հիմնադրի Յժման Ժե. քգ Տարեգարծը իւր սաների, Պ. Տեսչի եւ Ուսուցիչներէ հետ միասին գեղեցիկ ճառախօսութեամբք եւ երգեցողութեամբք:

Երեկոյեան լուսավառութեան եւ հրախաղութեան հանգէս կատարեցաւ եւ ձեմարանի սաներն մինչեւ ժամը 2 (9) ազգային սրտաշարժ երգերով ուխտաւորաց բազմութիւնը մխիթարելով, ի վերջոյ մեծ զանգակատան առջեւը իւրեանց գիշերային հանգստեան աղօթքը մատուցին եւ մեկնեցան ի ձեմարան, եւ ժողովուրդն եւս յիւրաքանչիւր տեղիս:

ՅՕՐԱԳՐՈՒԹԵՆԷ ՍԻՆՈԳԻ.

21 Մայիսի 1882 ամի: Սինօզ Սրբոյ Էջմիածնի օրագրութեամբ ի 12 Ապրիլի տարւոյս եզրակացոյց՝ զՅովհաննէս քահանայն Թեմուրազեանց ի պատճառս անզուսպ գնացիցն եւ ազգի ազգի կատարեալ անկարգութեանցն լուծել ի կարգէ քահանայութեան եւ դասել ընդ աշխարհականս, եւ հրամանագրութեամբ ի 12 Ապրիլի Թ. 982, պատուիրեաց Կոնստանդնուպոլսի Վրաստանի ածել զվճիռ Սինօզիս ի կատար:

Այլ որովհետեւ յիշատակեալ քահանայն, որպէս յայտնի եղեւ Սինօզիս, զտանիւր յերեւան քաղաքի, ուստի եւ զրութեամբ ի 13 Ապրիլի Թ. 1007, խնդրեաց ի քաղաքական ոստիկանութենէ Երեւանայ զքահանայն զայն առաքել ընդ յատուկ անձի ի Տփլիս եւ յայնմնել ի տնօրէնութիւն Կոնստանդնուպոլսի Հայոց տեղւոյն եւ առաջադրութեամբ ի նոյն թիւ Թ. 1006, պատուիրեաց Փոխանորդին Երեւանայ առաջի առնել ոստիկանութեան զհարկաւորելի քանակութիւն ծախուց առաքման նոցա, զորպիսին թէ եւ մատուցեալ է ոստիկանութեան, որպէս հաւաստի առնէ Կոնստանդնուպոլսի Երեւանայ, այլ սակայն ոստիկանութիւնն Երեւանայ տակաւին չէ ածեալ ի կատար զգրութիւն Սինօզիս, եւ Յովհաննէս քահանայն՝ որպէս զեկուցին Անդամք Սինօզիս, ինքնազուլի շրջի աստանօր համարձակ ի պարտպի վանացս Էջմիածնի, ուստի եւ հրամայէ: զՅովհաննէս քահանայն Թեմուրազեանց ածել յԱտեան Սինօզիս եւ համաձայն նախկին եզրակացութեան Սինօզի, յետ ընթեռնելոյ նմա զարարս նորա ի նախկին օրագրութեան, լուծել զնա ի կարգէ քահանայութեան արկանելով եւ անդէն բառնալով ի նմանէ զփիլոն (որ եւ կատարեցաւ), մերկացուցանելով յեկեղեցական հանդերձիցն, պատուիրել ազանել այսուհետեւ հանդերձ աշխարհականի, եւ թողուլ ի կամս անձին, զորմէ եւ վասն տեղեկութեան ծանուցանել Կոնստանդնուպոլսի Վրաստանի՝ պատուիրել տնօրինել զարժանն վասն դասելոյ զնա ընդ հարկատուս. իսկ զընթացից քաղաքական ոստիկանութեան Երեւանայ՝ ծանուցանել նահանգապետին Երեւանայ եւ խնդրել տնօրինել զարժանն վասն յետս դարձուցանելոյ զառաջի արարեալ ի Փոխանորդէն Երեւանայ զգրամանս առ նոյն Առաջնորդն, որում եւ ծանուցանել զվերոյգրելոյն ի լրումն առաջադրութեան Սինօզիս ի 13 Ապրիլի Թ. 1006: Իսկ ի գիտութիւն եւ ի զգաստութիւն բոլոր հոգեւորականաց Հայոց՝ տալ տպագրել յէջս Արարատ Ամսագրոյ: